

ՀՆՁՍԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Հնչակեան Կուսակցութեան X և Y երկրների 14 մասնաձիւղերի Z քաղաքում կայացրած Պատգամաւորական Ժողովը՝ ստանալով նախկին կեդրօնի հրաժարականը՝ ընտրեց նոր Կեդրօն, 5 անձերից բաղկացած, որոնց և յանձնեց Կուսակցութեան գործերի վարչութիւնը, սկսած 1899-ի սեպտեմբեր ամսից:

ՊԼՏԳ. ԺՈՂՈՎ.

ՍԵՐ ԴԻՐԲԸ

Հայ ազգայնութիւնը, չնայելով իւր քաղաքական միութեան խորտակմանը, զանազան խուժուժ ազգերի դէմ իւր մղած դարեւոր կռիւների ընթացքում, ոչ միայն կարող եղաւ Մայր—Հայրենիքի մէջ ընդ միշտ վառ պահել ազատութեան բազմութիւ կղզեակներ. այլ և նա՝ որպէս կենսունակութեան անհրաժեշտ պայմաններով օժտուած մի ժողովուրդ, իւր տագնապալից գոյութեան այլ և այլ շրջաններում հնարաւորութիւն ունեցաւ միութեան, շեղծել մի շարք այնպիսի կայծեր, որոնք իրեն բացայայտ գրաւականներ իւր կենդանութեան ամենայն երաշխաւորում էին, որ նա ոչ մեռած և ոչ էլ վերջնականապէս համակերպած էր այն ձախող դրութեան, որի մէջ դրել էին իրեն պատմական տխուր հանգամանքները, և որ նա անվհատ շարունակում էր իւր ազգային գոյութեան անողորմ պայքարը, նպատակ ընտրելով իւր համար կեանքի աւելի՝ պատշաճագոյն, աւելի՝ լայն պայմաններ ստեղծելու: Հետեւաբար՝ եւրոպական քաղաքակրթութեան շաւղի մէջ երկար ժամանակից ի վեր մտած հայ ազգի համար, իրերի բնական ընթացքով, այլևս բոլորովին անհանդուրժելի և մեռելութեան տաճիկու աստիճան սեղմել պիտի լինէին կեանքի այն սահմանները, որ իրեն համար եղերագծած էր թիւրք բռնակալութիւնը. ուստի նա անհրաժեշտօրէն, եթէ միայն ուզում էր ապրել, պիտի ձգտէր թօթափել դարերից ի վեր իւր վերտօմանրացած տաճիկ բռնակալութեան կաշկանդիչ լուծը և աշխատէր, իւր ազգային զարգացման պահանջին համեմատ, նորագոյն կեանքի անհրաժեշտ աւելի ընդարձակ, աւելի՝ յարմար պարագաներ ձեռք

բերելու:

Պատմական կեանքի տուած այդ անխուսափելի ձգտումները՝ հայ ժողովուրդը փոխանցեց իւր յետնորդներին սերունդէ իսերունդ: Աւ այդպիսով ընդհանուր դժգոհութեան, հանրական իղձերի օղակները հեռզհեռ ընդարձակուելով՝ աւելի ու աւելի մեծ շրջանակներ էին կազմում: Բայց այդ բոլորը դեռ շատ տարտամ, անոգի փափագներ էին:

Իրերի այդ պայմանների ներքոյ երեւան եկաւ «Հնչակ»ը, իբրեւ անյետաձգելի պահանջ և անշեղ հետեւներ հայ ազգայնութեան յառաջադիմութեան և նրա կեանքի պայմանների զարգացման. հետեւաբար «Հնչակ»ի կատարելիք պատմական դերը բոլորովին որոշ էր և արդէն իսկ գծուած, զի նա արդիւնաբար էր հայի դարաւոր կեանքին: Ուստի քսջ ըմբռնելով իւր պատմական դերի բաժրութիւնը և կոչումը, «Հնչակ»ը, իբրեւ հայ առաջին կազմակերպուած քաղաքական մարմին, ծրագրեց, աշխատեց ս'չ միայն ոգի և մարմին տալ հայ ժողովրդի պատմական ձգտումներին և նրա համայն իղձերն իւր մէջ ամփոփել, այլ և նա որոշակի մասնանիշեց ա'յն բոլոր միջոցները, ա'յն բոլոր ուղիները, որոնցով միայն հայութիւնը կարող պիտի լինէր ձեռք բերելու իւր փայփայած քաղաքական և ընկերական ազատութիւնը:

Խաղաղ յառաջադիմութեամբ և պահպանողականութեամբ անկարելի էր երբ և իցէ թիւրքի ճիրաններից ազատուիլ և գոյութեան ցանկալի նորագոյն պայմաններ ստեղծել:

Լացը, բողբոքը, գանգատը երբէք չպիտի կարողանային հայի դատը լուծել—նրան ընկերական և ազգային ազատութիւն տալ: Այդ բոլորը նա միայն և միայն իւր յեղափոխական, ապստամբական ոյժերից պիտի սպասէր:

—Ուրեմն այդ բոլորի համար հարկաւոր էր յեղափոխական շեշտակի գործունէութիւն: — Պատմական մի անհրաժեշտ շրջան, որի օղակներով անխուսափելի կերպով անցնում են բոլոր նորածին ազգերը:

Իբրեւ կիսանահապետակտն, մանր սեպհականատէր և մանր արդիւնազործող մի ժողովուրդ, հայը իւր վաստակով, իւր արիւնքը բերելով բեղմնաւորած արտերի արդիւնքով առաջ բաւականաչափ միջոց ունէր թէ մի կերպ իւր բազմանդամ ընտանիքը

ապրեցնելու և թէ իւր անմիջական մակարոյծ տէրերին՝ քիւրդ և թուրք բէկերի ու աղաների նիւթական կարիքները հոգալու: «Ա» հայ «ապեան», ամբողջ տարին աշխատում, չարչարում էր, ամէն կարգի զրկանք կրում, որպէսզի (Օսմանեան բռնապետութեան առաջին պահապան գործիքը՝ զօրքը, ի հաճոյս ապրէր, այն զօրքը՝ որի դերն էր բանակիլ հայի սրտի վերայ և նրան միշտ քաղաքական, ընկերական և տնտեսական ստրկութեան մէջ պահելու: Հայ երկրագործը իւր յոգնածան վատակով լիսառատ ոռոգիկ էր հայթայթում այն դատաւորներին, որոնք առանձին պարտականութիւն ունէին հսկելու, որպէսզի թիւրք բռնակալութեան հիմը կազմող բոլոր անարգարութիւնները անխախտ մնան, հեռաւար և արդարադատութան դուռը միշտ փակ պահէին իրեն նիւթական ամէն հանգստութիւն մատակարարող հայի առաջ: Հայ հողագործը իւր ստրկական աշխատութեամբ, երբեմն և կեանքի գնով, փարթամութեան և մեծաշուք վայելչութեան մէջ էր պահում իւր այն կառավարիչներին՝ փաշաներին, գայմադամներին... որոնք միակ ձգտում ունէին, ոչ միայն իրեն կեանքի և գոյքի ապահովութիւն չտալու, այլև պաշտօնապէս ջանալ արմատախիլ անել իրեն իւր հայրենիքից:

Իւր թիկունքների վերայ ծանրացած այդ բոլոր պաշտօնական և անպաշտօն տէրերին կերակրելուց յետոյ, հայ դիւղացին, հայ մանր արհեստաւորը թէև յաճախ մնում էր գետնախշտի, սովամահ լինելու ասալիճան անօթի և կիսամերկ, բայց այնուամենայնիւ նա դեռ ստիպուած չէր լինում խաղաղ կտրուելու իւր ընտանիքի ծոցից, ծննդավայրից, հողից ու ջրից և հարկւրաւոր մզոն հեռու օտար երկիրներ դիմելու՝ աշխատանք որոնելու համար:

Տաճկական բռնապետութիւնը կղզիացած երկիր մնալ չէր կարող: Եւրոպական ազգերի հետ յարաբերութեան մէջ մտնելով՝ իբրև յետադիմաց մի երկիր, շուտով նա մի ընդարձակ վաճառաւորի, մի մեծ շուկայ դարձաւ եւրոպական հսկայական ծարտարագործութեան: Այդ հանգամանքը մեծապէս պիտի ազդէր հայ կիսանահապետական, պարզ գործիքներով աշխատող երկրագործի և արհեստաւորի տնտեսական պայմանների վերայ և կազմալուծումն առաջ պիտի բերէր:

Միևս կողմից օտար և ցեղակից վաշխառուները օգտուելով հայ աշխատաւորի նիւթական ճգնաժամից, մին միևս յետևից նրա ձեռքից խլեցին իւր աշխատութեան բոլոր միջոցները և այդպիսով երկրի հարստութիւնը իրենց ձեռքը կեդրոնացնելով՝ յառաջ բերեցին մի դասակարգ անժառանգ բազմազգութիւնների: Հայ ժողովուրդը մը

տաճ էր կապիտալիստական շրջանի մէջ: «Նչակ» և տնտեսական պայմանների այդ հիմնական փոփոխութիւնը չէր կարող աչքի առաջ չունենալ և իւր ծրագրի հեռաւոր կէտերից մին չանել սոցիալիզմը:

Այդ էր իրերի դրութիւնը, այդ էր իրերի պահանջը, որոնց հարկաւոր էր անմիջական զոհացումն տալ: Եւ «Նչակ» իբրև հարազատ ծրնունդ իւր ժամանակի, այդ շաղի մէջն էլ մտաւ:

Թուրքական պետութիւնը իւր գոյութեան հիմունքը դրած է կրօնական-աստուածաբանական և զինուորական-բռնապետական հաստատութիւնների վերայ: Իբրև ասիական բիրտ ոյժի մարմնացումն, նա իւր յարատեւութեան զրաւականներից ամենաանհրաժեշտն է համարած իւր բաղկացուցիչ օտարասեռ ազգերի բացարձակ ստրկացումն և, իհարկին, ոչնչացումն: Իւր կրած վերջին անդամահաստութիւններից կատաղած, նա իւր ատամները արդէն կրծաւանդում էր դէպի դժգոհ հայ ազգը. ուստի իւր հին զէնքերով, անժամանակակից միջոցներով, ամէն ձիգ թափեց Նչակեան առաքեալների գործունէութիւնը ցանցելու: Սակայն չնայելով թուրք բռնակալութեան յարուցած ամէն ազգի խոչնդոտներին այնուամենայնիւ Նչակեան անձնագոհ հերոսները, համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում, իրենց ժամանակակից բարոյներով, իրենց անվահեր գործունէութեամբ, իրենց հրոսակային խմբերի դիւցազնական կռիւներով շուտով երևան բերեցին մի ազգ, որ չէ թէ միայն արդէն մտած էր հրապարակային իրական բողոքի շրջանի մէջ, այլ և պատրաստում էր զէնքի ոյժի վերայ յենուլ իւր արդար պահանջները: — Գում - Գաբուի անդրանիկ ցոյցը, Մարզուանի, Եօզղատի, Գաղատիայի խլրաւումները և հարկւրաւոր անձերի բանտարկութիւնը ու արքայը ոչ միայն թիւրք կառավարութեան, այլև եւրոպական պետութիւններին իսկ ստիպեցին մտահոգ հայեացք ուղղելու դէպի հայ ազգը և նրա երկիրը՝ Հայաստան, ուր իրերը բոլորովին մի նոր, աննախընթաց կերպարանք էին առած:

Տրորուած Հայրենիքի հեռու անկիւններից մէկում ժամանակի ստրկացուցիչ ոգին իւր թևերը տարածել չէր կարողացած: Այնտեղ՝ պահապան լեռների բարձունքների վերայ, պատնիշող խոխոմաձիգ հովիտներում, իւր նահապետական, համայնական կենցաղավարութեամբ, հայրենի ազատութեան շնչով ուռնացած դեռ ապրում էր մի ժողովուրդ, որին բնազդօրէն քաջ յայտնի էին ազատութեան և նրա առաջին վահան՝ զէնքի մէջ եղած սերտ առնչութիւնը: Թուրք բռնապետութեան աչքին դա մի խոցոտիչ փուշ էր. ուստի երբ իւր ստորագաս գործիքների՝ բուրդ այլ և այլ ցեղապետների միջոցով

փորձեց նրան իւր ձիրանների մէջ օղակել, այն ժամանակ նա՝ հերոսների այդ խեղճերանքը՝ Սասունը, չնչակեան ժողովրդանուէր գործիչների թելադրութեամբ և ղեկավարութեամբ, ոտքի ելաւ և շուրջ երկու տարի նորածին Հայրենիքի ազատութեան դրօշը ծածանեց Տաւրոսի ազատաշունչ լեռների վերայ: Ախեցաւ անհաւասար կռիւը: Մի կողմից կանգնած էր մի բուռն ժողովուրդ, որ մարտնչում էր իւր սեպհական ազատութեան, իւր ստացուածքի և գոյքի համար, իսկ միւս կողմից թրքական բռնակալութեան անասնամիտ զօրքերի խառնիճաղանձ բանակները, որ իրենց հետ բերում էին ըստարկութիւն և շղթայ: Այո՛, ընկաւ Սասունը, բայց իւր ղիւցաղնական պարտութեամբ ցնցեց ամբողջ բաղաբակիրթ աշխարհը և իւր հերոսական արեան գնովն էր, որ հային տուեց մայիս 11-ի (1895) ծրագիրը:

Ինչ էր այդ ծրագրի էութիւնը:

— Գա թիւրքիան իրենց հովանաւորութեան տակ առնող պետութիւնների պաշտօնական վաւերացում էր, որով նրանք հաստատում էին թէ՛ օսմանեան կայսերութեան մէջ տիրող բաղաբակիան, ընկերական և տնտեսական պայմանները այլ ևս անկարող էին իրենց մէջ շրջանակել հայ կեանքը և որ հայ ժողովուրդը իւր գոյութիւնը պահպանելու համար պիտի կազմէր տարբեր, անջատ մի մարմին, ունենալով իւր բաղաբակիան ուրոյն հաստատութիւնները և հասարակական ուրոյն կարգերը: Գա հայի պատմական իղձերի իրականացման առաջին նախաշաւիղն էր, որ մարմին էր առած «Նչակ»-ի դործունէութեամբ: —

Բայց թիւրքիան իրենց մէջ բաժանելու ձգտում ունեցող պետութիւնների համար հաւասարապէս ցանկալի էր, որ հայկական վեց նահանգները աշխարհագրական միաձոյլ մի մեծ շրջանակ կազմէին և նրա մէջ ապրող հայ ազգը յառաջադիմութեան այնպիսի պայմաններ ունենար, որ նախադուռն պիտի լինէր ազգային ապագայ անկախութեան: — Գատասխանը բացասական եղաւ զխաւորապէս մէկի՝ Ռուսիայի կողմից, և սա ամէն տեսակ թակարդներ լարեց, որպէսզի այդ ծրագիրը իրականութիւն չտանար:

Սուլթանի արիւնկղակ կառավարութիւնն էլ շահագրգիռ պետութիւնների անհամաձայնութիւններից իւր ձեռքերը ազատ տեսնելով՝ հայկական մղձաւանջից միանգամից ազատուելու համար, դիմեց իւր նախորդների նուիրադործած պատմական մեթոտին. — այն է՝ օսմանեան բռնապետութեան մէջ ծաղած ազգային խնդիրները լուծելու ամենադիւրին միջոցը դժգոհ ազգի վերջնական ոչնչացումն էր: Գա կառավարական մի սխտէմ էր, որին, ի հարկին, միշտ ղիմել էին թուրք բռնապետները: Համար

բացառութիւն կազմել չուզեց և հաւատարիմ մարդկային ազգի ապականիչ իւր նախորդների ուղղութեանը, նա ամենայն սառնասրտութեամբ նախապէս գծագրեց և հայկական ընդհանուր կոտորածների հրամանը արձակեց: Թուրք խուժանը, կառավարչական պաշտօնեաները, զօրք բարձրագոյն այդ հրամանին արձագանգ տուին, և Հայրենիքի ամեն արկիւնում անպաշտպան և անպատրաստ հայի արիւնը հոսել սկսեց:

Մինչդեռ ընդհանուր սաքսափր տիրած էր ամեն կողմ, և եւրոպական նենդ ղիւանագիտութիւնը հազիւ միայն արձանագրում էր կատարուած բարբարոսութիւնները, իսկ եւրոպական ժողովուրդները առ առաւելն կարեկցութեան նշոյլ էին միայն արձակում դէպի ողջակիզող հայ ժողովուրդը, այդ ժամանակ Օւէյթունը, հայի պատմական արիութեան այդ անդաւաճան աւանդապահը, յիշեց իւր եղբայրական պարտականութիւնը, և չնչակեան վարիչների առաջնորդութեամբ ապստամբական կարմիր դրօշը բարձրացրեց: Օւէյթունը իւր տեղական շահերը պաշտպանելու համար շատ անգամ թուրքին ցոյց էր տուել իւր վէճքի ծանրութիւնը, բայց այս անգամ իրեն առաջնորդող զգացմունքը տարբեր էր: Այս անգամ համազգային զգացմունքն էր որ համազգային թշնամու դէմն էր ձակատեցնում նրան: Աւ հայ յեղափոխական դրօշի, հայ յաղթական սրի տակէն անարգաբար անցնող, մի բուռն քաջերից ջարդ ու փշուր եղող օսմանցին ստիպուեցաւ Օւէյթունցու հետ բանակցել ոչ իբրեւ հպատակի, այլ իբրեւ պատերազմող կողմի: Չնչակեան բազկի այդ մասնակի փառաւոր յաղթութիւնը մի կոթող էր հայ յեղափոխական պատմութեան:

Աւ այսպէս, աւելի բան տասը տարի շարունակ, «Նչակ»-ը կազմակերպեց, նախապատրաստեց հայ ժողովուրդը և յեղափոխական գործը աստիճան առ աստիճան իւր սկզբնական փուլը շրջանը ընդարձակելով՝ գործի զարգացման պահանջին համեմատ, մտաւ մասնակի շարժումների մէջ, որոնք իրենց ընդունած բոլոր իրադարձութիւններով անհրաժեշտ էին գործի սկզբնական շրջանի համար: Սակայն պատմական այդ շրջանը այլ ևս անցած է և այդ ուղղութեամբ գործելը այժմ աւելի բան ապարդիւն:

Հայ ազգի փրկութեան գործը կարող է յետաձգուիլ, բայց ոչ բոլորովին կանգ առնել և մոռացութեան տրուիլ: Ամենադառն փոթորիկների միջից անցնելով՝ հայը այսօր ոչ մոխրակոյտի վերայ նստող լացող է և ոչ էլ իւր արիւնջուայ Հայրենիքը մի մեծ գերեզման: Հայի կենսունակութիւնը այդքան մակերևութային չէր, որ այդպէս շուտով սպառուէր: Չնայելով իւր ունեցած սոսկալի կոտորածներին, այնուամենայնիւ Հայը դեռ կանգուն է իբրեւ մի կենսունակ ազգայնութիւն: Արդ՞ է նա

կանգ առնել, ինքն իրեն անշարժութեան մատնել ճիշտ այն ժամանակ, երբ օսմանեան բռնապետութիւնը, զլիսաւորապէս իւր հարուածներին երբ, իւր հոգեվարքին է հասած և Արեւելեան ինդըրով շահագորդուող ամեն ազգ պատարասուում է իրեն համար փրցնել մեծ պատառը: — Ո՛չ: — Հայը սկսել է, պէտք է որ շարունակէ մինչև վերջին յաղթանակը: Զէ՞ որ նոյն իսկ եւրոպական պետութիւնները, Հայ ազգի, մասնակի շարժումների հիմամբ, ընդունած են որ Հայն էլ օսմանեան ընկնելիք պետութեան ժառանգորդներից մէկը պիտի լինի: Երբի այդ պայմանների ներքոյ հայ ազգին մնում է մի վերջին, օրհասական ճիգ, — այն է, ընդհանուր ապստամբութիւն, որ իրերի բնական ընթացքով ուղիղ հետևութիւն պիտի լինի նրա յեղափոխական անցեալ դործունէութեան: Յետ կանգնել այլևս անկարելի է, եթէ չենք ուզում ազգովին ջնջուիլ:

Արդ, աչքի առաջ ունենալով այդ անհրաժեշտ, ծանր ու վճռական բողոք, Հնչակեան կուսակցութիւնը, որ իւր ծրագրի հիմ է ընդունած ժամանակիս ամենալայն՝ ընկերվարական յեղափոխական սկզբունքները, կոչ է անում դալ միանալ իւր հետ այն բոլոր հայ անկեղծ երիտասարդներին, որոնք իրենց կեանքի միակ նպատակն են ընտրել ժողովրդի բարօրութիւնը և Հայրենիքի ազատութիւնը, որպէս զի ընդհանուր աջակցութեամբ, միահամուռ ոյժով կարողանանք յաջողութեամբ պսակել այն Ս. Գ. օրո՞ր, որ Հայ ժողովրդի դարերից ի վեր փայփայած իղձն է եղել և որի համար նա այնքան շատ արիւն է թափել:

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ.

10, Հոկտեմ. 1899.

Մեր երկիրը կը հեծէ կառավարութեան անվերջ ծնշումներու և կեղեքումներու տակ. եթէ ներկայ անտարբեր ու մահացուցիչ վիճակը մի քիչ ևս շարունակուի, շուտով մենք կը տեսնենք մի մոխրակոյտ՝ տարածուած ամեն կողմ, ամեն անկիւն:

Գաւառներուս հայ ազգաբնակիւթիւնն ալ սկսաւ գաղթել, հեռանալ հայրենիքէն ու փնտռել բաղդը, դուցէ թշուառութիւնը, ովկիանոսէն անդին: Մեկնողները յոյսերը կտրած վերադառնալէ, ունեցած չունեցածնին ծախելով ու թիւրք պաշտօնեաների բուռը լեցնելով կը հեռանան:

Մի քանի օր առաջ մի խումբ Ատանայի շրջականերէն ու Խարբերդցիներ Մերսինէն փախչելու ատեն կը բռնուին մակոյկի մէջ մաքսատան պաշտօնեայնէրու կողմէ: Մակուկավարը ինքզինքը ծովը նետելով անյայտացած է, իսկ փախստականները առաջնորդուած են բանտ ուր չենք գիտեր մինչև երբ մնալու են:

Մտաբանդի հայու ճակատագիրն է կարծես, ուր որ երթայ չարչարուել ու հալածուել: Մտաւորապէս մէկ ամիս առաջ մէկ ուրիշ գաղթականներու խումբ, կազ-

մուած Մալաթիացիներէ ու Խարբերդցիներէ, այստեղ ծովեզերքը, ամառի տեղումնք, օրերով անօթի ծարաւ թաքնուելէ յետոյ, վերջապէս դրամի զօրութեամբ յաջողելով կը ճողոպրեն թիւրք բարբարոս կառավարութեան ճիրաններէն և իբրև ազատ երկիր ինքզինքնին կը նետեն Վիպրոս. սակայն այնտեղ ալ տեղական կառավարութեան կասկածը հրաւիրելով բանտը կը դրուին բաւական ժամանակով, մինչև որ խնդիրը կը քննուի և որպէս անվստահ մարդիկ կարձակուին:

Ինչ ընել սակայն, երկիրը արդէն սնանկացած, առևտուրը բոլորովին դադարած, մէկ քաղաքէն միւսը, արհեստի կամ առևտրի համար մարդ կը հանդիպի հազար ու մէկ դժուարութիւններու: Պօլիս, Զմիւռնիա և այլ տեղեր երթալ բացարձակապէս արգելուած է, մինչդեռ ահա ու սարսափը ժողովրդին ու ժառանգու ըրաւ: Անօթի խուժանը պատրուակ կը փնտռէ անդէն ու անպաշտպան հայու կողոպուտով կշտանալու:

Ազգային այս դատապարտելի անտարբերութեան առաջ արիւնդուշտ կառավարութիւնը, սովալլուկ պաշտօնեաները, անյագ տգործներու նման կը քամեն լքուած ու անպաշտպան Վիլիկեցու արիւնը: Մեր ստացուածքները բացարձակապէս կը գրաւուեն ու թիւք աղա մը վերջերս Այնթապի մէջ գրաւեց մի յայտնի հայու հողերը. այս բռնաբարութիւնը իմաց տրուեցաւ, կառավարութեան, բայց այս վերջինը ակա՛նջ անգամ կախած չէ:

Մութ քօղով մը ծածկուած է մեր երկրի երկինքը. մահը թէ կեանքը մեզ պէտք է դիմաւորէ: Նենգամիտ սուլթանը յ կատարեալ անգործութիւն կը տրիւ «ազգաբարութեան տակ, կը ջանայ հետզհետէ ջնջել մեր երկրէն հայ տարրը կամ նուազեցնելու անոր ազդեցութիւնը: Վերջապէս աջողեցաւ տափական խորամանկութիւններով իրեն գործիք դարձնել հայ աղաները, ազդեցիկ անձնաւորութիւնները և գրեթէ քիչ բացառութեամբ հոգեւորականութիւնը:

Հալէպի, Ատանայի և Տարսուսի բանտերը լեցուն են մերկ ու նօթի հայ բանտարկեալներով, առանց հարցնողի կամ պաշտպանութեան: Դառն չարչարաններու տեղեկագիրը ուղղակի խրկուեցաւ Պօլիս՝ Օրմանեան պատրիարքին. ամիսներ անցան ահա այդ թուականէն ի վեր և սակայն մեր դրութիւնը նոյնն է:

Ներկայ չիթի վիճակէն օգտուելով, սուլթանը ահա երկու-երեք տարի է ինչ խաղաղիք է դարձուցել իր քմահաճոյքներուն Սոյ կաթուղիկոսական խնդիրը: Հաղիւ միայն վերջերս, օրինաւոր չը նկատելով նախորդ ընտրութիւնը, ինչ արդէն ընտրուած եպիսկոպոսն ալ վախճանուեցաւ, թող տուաւ պատրիարքին ձեռնարկելու մի նոր ընտրութեան: Բայց մենք կը նախագուշակենք այժմէն, որ կաթուղիկոս կը նշանակուի մեկը սուլթանի ստրուկ, վաճառուած և ազգակործան եպիսկոպոսներէն:

Վերջին մէկ-երկու տարուան մէջ կառավարութեան կողմէ փակուեցան շատ մը վարժարաններ, իմիջի այլոց Խկէնդէրուանի հայ բողոքականներունը, բանտարկելով երկու ուսուցիչները, որոնց միակ յանցանքն է եղած, որ ուզած են դպրոցի շէնքը փոխել կամ բարեկարգ վիճակի մէջ պահել հաստատութիւնը: Այդ երկու խեղճ երիտասարդները մինչև այսօր կըսպասեն Հալէպի բանտը:

Թշնամին մեր ազգայնութիւնը ջնջել կը ջանայ. մենք ակնյայտնի կը նշմարենք աղէտը, որ կըսպասէ մեզ... Կը տեսնենք այս ամենը ու կաշկանդուած իրար աչքերնիս

կը յառենք դէպի հեռուն, դէպի մեր ազգակիցները, հա-
րազատ եղբայրները...

Մենք, սակայն, չենք մոռանար ու անզգայ լինիք դէ-
պի դրութիւնը, դէպի արիւնակից շրջանը ձգուած մեր
ետեւ. մեր արիւնը դեռ չէ ցամաքած, նա կենդանի է մեր
երակներուն մէջ. հազարաւոր նահատակուող եղբայր-
ներու ու քորերու արիւնը մեզ կը բերէ վրէժխնդրու-
թիւն. կռուով, միայն կռուով, պիտի կարողանանք պահ-
պանել մեր գոյութիւնը. այս երկրի մէջ դեռ կը գտնու-
ին անձնուէրներ ու կտրիճներ. թաղ ձեռք տան մեզ մեր
հարազատ հայրենակիցները, մենք գիտենք ինքզինքնիս
պաշտպանել:

Լ — Ն.

IV

ՋԵՅԹՈՒՆԻ ԾԱԳՈՒՄԸ.

(Մի գլուխ իմ «Լեոնորոգի» անտիպ գրքից)

Եւրո է ծագել Զէյթունը. ինչպիսի պայմաննե-
րի մէջ էր գտնուում այդ լեռնագաւառը Վիլիկեան
հարստութեան միջոցին և յետոյ. նա ինչպէս պահպա-
նեց իր գոյութիւնը մինչև այժմ. ինչ դէպքեր են
կազմում նրա պատմութիւնը վերջին 4-5 դարերի ըն-
թացքում. — ահա մի շարք կարեւոր հարցեր, որոնք
մինչև այսօր, ինձ թուում է, մատնել են անորոշութեան
ու մթութեան, և որ պէտք ունեն բացատրութիւննե-
րի, հիմնած պատմական փաստերի ու ապացոյցների վրայ:

Չը նայած, որ բոլորովին թարմ, նորագոյն է այդ
լեռնորդիների պատմութիւնը, պատմութիւն, որ լիքն
են բազմակողմանի անցուղարձեր ազդային նշանա-
կութիւն ունեցող, պարզ տեսնում է գոյութեան ամե-
նասուր կռիւը՝ մզած հերոսաբար և անհաւասար
կերպով, դարերի ընթացքում, մի բուռն ժողովրդի
կողմից՝ ընդդէմ բազմութիւ կիսավայրենի ցեղերի և
մի հրէշային կռուութեան, ինչպիսին է թիւրքա-
կան կռուութեանը. չընայած, որ այդ ամենը ա-
մուր կերպով կապւած է Վիլիկայի, և առհասա-
րակ հայերի ազատագրութեան թանգ հարցի հետ, որ
այնքան կենսական է ու կցւած իւրաքանչիւր հայի
սրտին, այդուհանգերձ, դա, այդ դաւառի ու նրա բնա-
կիչների ուսումնասիրութիւնը կատարւած է վայրիվերոյ
և անճիշտ կերպով և կամ լուրջ ուսումնասիրել փոր-
ձողն էլ դժբաղդաբար չէ ունեցել իր ձեռքի տակ
անհրաժեշտ նիւթերն ու տեղեկութիւնները:

Վարոս կեսից յետոյ մի քանի եւրոպացի գիտ-
նականներ, ինչպէս Վիկտոր Լանգլուա, Լէօն Պոլ Էն
հաղորդեցին առաջին տեղեկութիւններն այդ խուլ
լեռնային երկրի, այնտեղ ապաստանած մէկ ափ կտ-
րիճ լեռնականների գոյութեան և նոցա նիստ ու կա-
ցի մասին: Այնուհետեւ, երբ վաթսուներկան թուա-
կանների յայտնի դէպքերը արձականք տւին ամեն
կողմ, մեզնում էլ յայտնեցին յիշատակութիւններ,
տեսութիւններ, որոնք, սակայն, անբաւական են մի ո-
րոշ գաղափար կազմելու, ճանաչելու Զէյթունցին, նրա
անցեալը և այն երկիրը, ուր նա հաստատուել է, ուր նա
ապրել և երկար դարերի ընթացքում գոյութիւնը պահել
կարողացել:

Թէ է՞րբ է սկսել կազմել Զէյթունը, ինչպէս
է ընդունել այդ անունը, — պատմութիւնը լուռ է այդ
հարցերի առաջ: Վիլիկայի հարստութեան ժամանա-

կամիջոցի հայ կամ օտարազգի պատմիչների և կամ
արձանագրութիւնների կողմից ոչ մէկ անգամ չէ յի-
շատակւած Զէյթուն անունը:

11-րդ դարուց յետոյ մի քանի յիշատակութիւն-
ներ և ձեռագիրներ մեզ աւանդում են Ուլն կամ Ուլ-
նի անունը մասնացոյց եղած ներկայ Զէյթունը և
նրա շրջակայքը: Միայն 16-րդ դարի վերջերը մա-
հադաթէ ձեռագիր աւետարանների և եկեղեցական գրքե-
րի կողքերին գրւած, յայտնուում է մէկ ուրիշ, նոր
այն է՝ Զէյթուն անունը էլի երկրի նոյն լեռնային
մասը ցուցւած. սակայն նոր, կենդանի դէպքերի հետ
միասին և բոլորովին անջատւած իր նախորդներից: 16
և 17-րդ դարերում յիշատակւած է Զէթուն, քիչ
յետոյ Զէյթուն, իսկ վերջերս ընդհանրապէս Զէյ-
թուն: Նախորդ և այս դարերում մենք հանդիպում
ենք երբեմն Ուլնի և Զէյթուն միասին գրած: Ահա սը-
րանք են պատմական ծանօթութիւնները այդ լեռնագա-
ւառի անցեալից:

11 և 12-րդ դարերի ընթացքում, երբ Սիւսան-
եան իշխանութիւնը հետզհետէ կազմակերպւում էր և
զօրաւոր դիրք ընդունում նորանոր յաղթութիւններով,
և Վիլիկայի միջին, արևմտեան և հարաւային վայրե-
րը շէնանում ու բարգաւաճում էին հայկական քաղաքնե-
րով ու դիւղերով, հազիւ հիւսիսային և հիւսիս — ա-
րեւելեան լեռնագաւառներն ասպարէզ լինում հայոց
ասպատակող խմբերին և ենթարկւում վերջիններիս
տիրապետութեան: Այդ ժամանակամիջոցում հայկա-
կան բնակութիւն չը կար Զէյթունի մէջ: 12րդ դարի
վերջերում և սրա յաջորդ դարի սկզբներում կապա-
նը, Վահկան, Բարձր բերդն իրանց ամրութիւնների
շնորհով ներկայանում էին մի-մի կեդրոն հայոց զինու-
թական և քաղաքական ոյժերի և Տաւրոսի ստորոտը, բա-
րերը լեռնահովիտներում հետզհետէ հաստատուում
էին հայկական նոր գաղթականութիւններ, իրենց աշ-
խարհագրական դիրքերի յարմարութիւններով, և կազ-
մում Վոկիսոնի, Արեգնի, Ֆաւոնուսի, Հարգանի գա-
ւառները: 13-րդ դարում Վիլիկայի հայոց պետու-
թիւնը գտնուում էր ուժեղ ու կազմակերպւած վիճա-
կում և ընդունել էր քաղաքական իրաւունք, որպէս իշ-
խանութիւն, իր դրացի ժողովրդների առաջ: Մինչև
14-րդ դարը, երբ տակաւին Ռուբինեան թագաւոր-
ները պահպանում էին նոյն զօրութիւնն ու ազդեցու-
թիւնը և սահմանագիծները պահպանւում օտար
յարձակումներից, հայ ազգաբնակչութիւնը իրան ապա-
հոված բնակում էր գաղտային քաղաքներում կամ գիւ-
ղերում և երկրագործութիւնը, փոխանակութեան միջոց-
ները և հաղորդակցութիւնները տալիս էին բարդւած
և զարգացած մի դրութիւն:

Սակայն միևնոյն ժամանակ մահադական ցեղերը
սկսում էին զօրանալ Վիլիկայի շուրջը և սպառնալ
հայոց իշխանութեան գոյութեան: Արաբ, եգիպ-
տացի, հեռաւոր Ասիայից հեղեղի նման թափուող թիւրք-
մէն և թաթար ցեղերը խառնիճադոնձ բանակներով ար-
շաւում էին այն երկիրները, ուր կարողանում էին հայ-
թայթել առատ կողոպուտ և յափշտակութիւն: Վիլիկի-
ան էլ, շնորհով իր աշխարհագրական յարմարութիւնների,
ասպարէզ դարձաւ այդ կիսավայրենի ցեղերի աւերող հո-
սանքի առաջ, նա մանաւանդ խաչակրաց անաջող արշա-
ւանքներից յետոյ: Արաբին թշնամիների բանակնե-
րը ամեն կողմից զարկեցին, փրփրած ալիքների նման:

Վիլիկիայի ընդարձակած սահմաններին, երկիրը թատր ներկայացնելով նորանոր արհեստից տեսարանների և դրանով հասցրին ճակատագրական հարածը Սիււա- նի հայկական իշխանութեան:

14-րդ դարու կեսից յետոյ Հայոց զինուորական ոյժն անկարող եղաւ մաքառելու բազմաթիւ թշնամի- ների դէմ և պաշտպանելու երկիրը նրանց աւերումից: Շրջապատը գոյութիւն առած թիւրքմէն ու թաթար ցեղերն արդէն կազմել էին մի մի զօրեղ իշխանութիւն: Եգիպտացիին, Արաբը, Գարամանի խանը այլ ևս անար- գել արշաւում էին մինչև Տարսոն, Ասանա, Անարգու- բա, Սիւ հայկական անառիկ բաղաճները և տակաւին իշխանութիւնը չը վերջացած արդէն զգայի կերպով նւազել էր գաշտային գաւառների բնակչութեան բանակը: 14-րդ դարի վերջերում, երբ Ռուբէնեան թաղաւոր- ների գահը թափուր մնաց վերջին անգամ և երկիրը գահալիստեց անիշխանական վիճակում, ամբողջ Վիլիկիան լողում էր արիւնի մէջ իբաց առեալ հիւսիսային գա- ւառները, ուր դեռ ևս թշնամու արհաւիրքը չէր կա- րողացել թափանցել: Սիհնի և Ջիհնի ընդարձակ, բերրի գետահովիտները, բազմամարդ քաղաքներն ու գիւղերը ամայանում էին և ենթարկւում մեռելութեան:

Հէնց այս տխուր շրջանում Վիլիկիայից գաղթական- նութիւնը ստացաւ աւելի ու աւելի ընդարձակ ծաւալ: Ազգաբնակչութեան մի մասը գաղթեց հեռաւոր երկիր- ներ—Վիրապ, Հնդկաստան, Արշիպեղագոսի կղզիները, մինչև Միջերկրականի արեւելեան և եւրոպական ափերը, ուր գտաւ կեանքի ապահովութիւն: Մի մասն ևս ան- կարող մաքառելու և գոյութիւնը պահպանելու հանգեւ ծանր պայմանների, ձուլւեց տիրապետող և հա- րստահարող տարրերի հետ. ինչպէս Բիւրդ- Գաղի քիւրդերի մի մասը, Բերդուսը, Անդրունը, Գափուր- Գա- ղին և Բաղաբըզնի գաղտի թիւրքական գիւղերից շա- տեր, որոնք դեռ ևս զանազանում են հարեան իսլամ ցե- ղերից իրանց դիմագծերով, նիստ ու կացով և սովորու- թիւններով: Իսկ մէկ ուրիշ մասը, ամենաառողջ բնակ- չութիւնը, խումբ- խումբ գիւղացի և ապաստանեց բարձրա- բերձ ու անառիկ լեռնահովիտների մէջ, հաստատուեց ցուրտ, անմատչելի գահաւանդների վրայ կտմ անտառա- պատ ձորամէջերում:

Ապաստանութեան գլխաւոր վայրեր եղան երկրի սրը- տի վրայ ձգւած Տաւրոսի և Ամանոսի (Հայ կամ Սև լեռ և կամ Գեափուր-Գաղի) ընդարձակ լեռնագոտիները: Հայկա- կան քաղաքները ու գիւղերը հետզհետէ փոխա- գրւեցին ու վերահաստատուեցին այս լեռների ստորո- տը կամ լեռնաձորերում, ուր կարելի էր ապահովել կեանքը: Հայերը համախմբւեցին գլխաւորապէս չորս կարեւոր կէտերի վրայ— ա) Վիլիկիայի հիւսիս- արեւելեան կողմը, Բերդի լեռնափանդակի շւրջը, ուր հաստա- տւեց Զէյթունը. բ) Տաւրոսի հիւսիսային կողմը, Քո- ղանի լեռների ստորոտը՝ Հաջին. գ) հարաւարեւմտք, Գեափուր-Գաղի լեռներում՝ բազմաթիւ մեծ ու փոքր գիւղեր. դ) հարաւային կողմը, Միջերկրականի ափե- րում՝ Բայաս, Չոր-Մարգլան, Բէլան, Սէգիա և Քէսաբ: Վերջիններս ունեն պատմական ու ազգային ոչ նւազ կա- րեւոր դէպքեր, և ցուրդարձեր, որոնց մասին սակայն չենք խօսի առայժմ սոյն աշխատութեան մէջ: Սրանց անց- եալը մնում է անորոշ ու մութ, մինչդեռ իրանց ժամա- նակակից պատմութիւնը և ներկայ վիճակը, իր բազմա- կողմանի երևոյթներով, առնւած են անտեղ ու անուշա- դիր:

Վիլիկիայի հարստութեան քայքայման և գաղթա- կանութեան սոյն շրջանում է, ինչ Բերդ-Գաղի ստո- րութը, անառիկ լեռների ծոցում սկսում է կազմել և գոյութիւն ունենալ Զէյթունը:

Վկատի ունենալով պատմական ցիրուցան յիշատակ- ները մի կողմից, միւս կողմից տեղական աւանդութիւն- ները պատմած ծերունի զէյթունցիներից, կամ քա- ղաքի ու բերդի հնութիւնն ու ոճը, Զէյթունը, իբրեւ մի հայկական գիւղ, սկսում է կազմել 14-րդ դարի վեր- ջերը միայն, ոչ առաջ: Նախ բան այդ թւականը որեւէ ապացոյց կամ աղբարկ չը կայ պատմութեան մէջ նրա գոյութեան մասին, իսկ յետոյ, աւելի ուշ, նա երեւան է գալիս որպէս մի գիւղ կամ աւան: Պարզ է, որ քաղա- քական այնպիսի հանգամանքներում և տաքնապնդում, որոնց ենթարկւեց ամբողջ Վիլիկիան թաղաւորութեան անկումից յետոյ, անհնար էր այդ լեռներում պահպանել գոյութիւնը մի գիւղաքաղաք կամ քաղաք, ինչպիսին է ներկայ Զէյթունը, որին պակասում է բաւականաչափ դաշտագետին մշակելու, և որի շրջակայքը մատնած ե- ղած անվերջ արշաւանքների, կանոնաւոր հաղորդակցու- թիւն չէր կարող ունենալ մօտակայ քաղաքների կամ գաւառների հետ հայթայթելու համար կեանքի անհրա- ժեշտ պէտքերը:

Մէջ ենք բերում նաեւ հետեւեալ նկատողութիւն- ները: Ջիհնի գլխաւոր աւազանը կազմող այդ լեռ- նափնդակը և մասնաւորապէս նրա արեւելեան մասը, որը թիւրքիայի արդի վարչական բաժանումների համա- ձայն կոչւում է Զէյթուն գաղա, 12, 13, և 14 -րդ դարերում բաժանւած էր մի քանի գաւառակների կամ թեմերի—Վապան, Կօկիսոն, Արեգի և Ֆոնուզ: Սրանք կազմում էին մի- մի բերդատիրութիւն առանց Զէյ- թուն քաղաքի: 12-րդ դարի վերջերը, երբ լեռն մե- ծը ամբողջապէս գրաւեց Սիհնի և Ջիհնի գաշտա- յին հովիտներն ու լեռնագաւառները և երկրի սահման- ները լայնացրեց մինչև Էլբիստան կամ Ալբաստա քա- ղաքը, այդ թւականից միայն վերոյիշեալ գաւառները (ներկայումս Զէյթուն) անցան հայկական Վիլիկիայի սահ- մաններից ներս և բնակւեցին հայ գաղթականների կողմից: Եւ սակայն թէ այդ ժամանակամիջոցում, թէ առաջ և թէ յետոյ, պատմութիւնը աւանդում է զանազան պա- րագրանք այդ շրջակայքի նկատմամբ, առանց հաղոր- դելու որևէ ծանօթութիւն մի քաղաքի, մի գիւղի մա- սին, որը յիշեցնի այժմու Զէյթուն քաղաքը: Նոյնպէս և լեռնից յետոյ, 13-րդ դարում, հայերը նընդհատ յարաբերութիւն և պատերազմներ ունեցան Մարաշի, Ալբիստանի և աւելի հիւսիս-արեւելեան գաւառների հետ. երկար ժամանակ նրանք գրաւած էին Բերդուսը, որը շատ մօտ է Զէյթունին. նաև 1266 թ. երբ Հե- թում ա. -ի բանակը գնում էր Կօկիսոնից, անկասկա- ծելի է, որ նա անց կեցաւ Զէյթունի հիւսիսային Ղսու- խով, Բէրդի ստորոտով և Զէյթունի անմիջապէս ե- ղերքից. — դարձեալ մենք չենք հանդիպում մի աղնար- կութեան Զէյթունի վերաբերութեամբ:

14-րդ դարու վերջերը միայն սկսաւ կազմել Զէյ- թուն: Խումբ- խումբ ընտանիքներ երկրի զանազան կող- մերից, խոյս աւած թշնամու սրից, ապաստանեցին ընու- թեան ընծայած անմատչելի լեռների ու անտառների մէջ: Զէյթունը միայն հիւսիսի մոտ լեռներով և ու- լորուն, անանցանելի ձորերով պիտի կարողանար ա- պաստան լինել թշառ. փախստականներին և պատսպա-

րել նրանց փրկարար գրկումը: Նրա անտառները լի-
քըն էին փախստականների համար վայրի պտուղներով և
որսի կենդանիներով, և ձիթենի, նոնենի, թզենի, խա-
ղող ևն ցրած էին առատ կերպով նրա ձորամեջերում
մշակած հայոց տիրապետութիւնից աւելի առաջ, դեռ
Յոյների և քննովացիների ժամանակներից:

Ինչ որ յիշել ենք աշխարհագրական մասում, Զէյ-
թունի կեդրոնը, երկու գետակների նեղուցում հաս-
տատուած է փոքր, սակայն անառիկ մի բերդ, որի շինու-
թիւնը շատ հին է, գուցե Հռոմէական կամ յունական
դարերից մնացած: Նրա շինածքն ու պարիսպները ու-
նեն Յունական ոճ: Հաւանական է սա լինէ Անէ բեր-
դը, որի տէրը, 12-րդ դարի վերջերում, էր Հեռի
անունով մի իշխան և ներկայ՝ Ռուբինեան առաջին
թագաւորի թագադրութեան հանդիսին: Զը կայ այդ
շրջանում մեկ ուրիշ բերդ մատնացոյց լինելու որպէս
Անէն: Ահա այդ փոքրիկ բերդի շուրջը համախմբեցին
հայ փախստական ընտանիքները, հաստատեցին աներ
նրա ժայռոտ կողքերին և հիմնեցին մի նոր գիւղ յե-
տագայ Զէյթունը:

Ինչ վերաբերում է անւան, այլ և այլ կարծիքներ
են յայտնւած: Ա. Լանգուան և Է. Բեգլիւ ընդունում
են, նոյնպէս մասամբ հ. Ալիշան, թէ այդ ստացւած է Զէյ-
թուն (ձիթապտուղ) թիւրք բառից շուրջը գտնւած
ձիթենու անտառների համար: Անտառակոյս է այդպէս
լինել: Բնակիչները, մասնաւորապէս հին սերունդը
անւանում են առհասարակ Զիթենի կամ Գեղջ:
Գաւառը անւանւում է Զէյթուն Օսմանցիների կողմից
սրանց տիրապետութիւնից յետոյ:

ՀՐԱՉԵԱՅ — ՄԱՐԱԼ:

ՍԵՊՏԱՆԸ ՀԱՐԱՆՈՒՄԻ ԱՓՐԻԿԱՅԻՆ

Սրանից հազիւ երկու ամիս առաջ քաղաքական
աշխարհի ուշադրութիւնը ամբողջապէս դարձած էր
դէպի Հօլանդիայի փոքրիկ Լահէ քաղաքը, ուր հա-
ւաքուած էին աշխարհի Մեծերի ներկայացուցիչները՝
յատուկ միսիա ունենալով ազգերի համար խաղա-
ղութեան ծրագիր մշակելու... Մի անգամ էլի
խաբուեցաւ միամիտ և սանտիմենտալ աշխարհը, կարծե-
լով որ Մեծերի բացարձակ կամքը, ենթադրելով որ
նրանք անկեղծ լինին, կամ մշակուած ծրագիրները,
ընդունելով որ սրանք հանձարի արդիւնք լինին, կա-
րող կլինեն երբեք և իցէ խաղաղութիւն տալ ազգե-
րին, քանի դեռ սրանք գտնւում են քաղաքակրթու-
թեան այնպիսի ստագիայի վերայ, ուր դասակարգային
խորին հակասութիւնները, միջազգային շահերի անտա-
գօնիզմը և կապիտալիստական անխուսափելի մրցակ-
ցութիւնը ամեն րոպէ պատրաստ են հանելու այդ
ազգերը մէկը միւսի դէմ: Ուստի և դէպքերը՝ որ կա-
տարւում են և արագօրէն գահավիժում հեռու Հա-
րաւ Աֆրիկայի ծայրում, հրաւում են տալիս մինչև ա-
կանջները կարմրելու բոլոր նրանց, որոնք զարմանալի
պարզամտութեամբ խաղաղութեան այդ կեղծաւոր կօն-
գրէսից սպասեցին, ո՛րը իւր ցաւերի դարմանը, ո՛րը իւր
գուրգուրանքով փափայած իդէալի իրականացումը...

Իայց գանք իրողութեան:

Իրողութիւնը այն է որ անգլիական կոլօնիաների
նախարար Սըր Զէմբելէյն, առանձին կամակորու-
թեամբ առաջ տարաւ մի այնպիսի քաղաքականու-
թիւն, որ վերջ ի վերջոյ յանգեցաւ այժմեան պատե-

րազմին, որին սպասում էին զայրացած անհամբերու-
թեամբ ոչ միայն ջինգօիստները, այլ նոյն իսկ և, ցա-
ւալի է տեսել, լիբէրալներից շատերը: Իսկապէս դրժ-
ւար չէր իրերի յաջորդական ընթացքին օրն օրին հե-
տեողին համար թափանցել այդ քաղաքականութեան
իմաստին մէջ և գտնել որ կատարուած բանակցութիւն-
ների արտաքին ձևին տակ ծածկուած կար մի կանխօ-
րօք մտածուած պլան, որի իրագործման առաջ կանգ-
նեցնելու չէին անգլիացի նախարարին ոչ չլրիւգէրի, բօէր-
ների Հանրապետութեան նախագահի, տրամաբանու-
թիւնը, ոչ իրաւունքի և արդարութեան հասկացողու-
թիւնը և ոչ այն բարոյական ահագին ձեռնարկ, որը
աշխատում էր գործ դնել նրա վերայ եւրոպական
շահախնդիր և կասկածելի դիպլոմատիան: Գեռ երէկ
Գրէյֆիւսի կրկին դատապարտութեան վճռով զայրա-
ցած Անգլիան, որ մինչև իսկ ուխտ էր կազմում բօյ-
կօտ տաժի ենթարկելու Փրանսական 1900 ի մեծ
Յուցահանգէսը և Փրանսական աղգը մարդկային ազ-
գերի շարքից դուրս հանելու վճիռներ էր տալիս, այն
պատճառով որ վերջինս վիրաւորում էր արդարու-
թեան տարրական զգացումները, ոտքի տակ ա-
ռաւ ամեն նկատում արդարութեան և պատուի և
մարտի դաշտը հանեց մի փոքրիկ նահապետական խա-
ղաղ ժողովուրդ, նրա վերայ բարդելով նաև պա-
տերազմից առաջացող ծանր հետեւանքների պատաս-
խանատուութիւնը: Եւ այս րոպէիս Անգլիան, այն Ան-
գլիան, որ իւր մեծ հարստութեամբ ու առաջնակարգ
նաւատորմիդով սարսափ է ազդում պետութիւններին,
առանց ամենալու բանակներ է ուղարկում դէպի Հա-
րաւային Աֆրիկա և կանոնաւոր պատերազմ մղում
Տրանսվաալի և Օրանժի Ազատ Տէրութեան միացած
բօէրների դէմ, որոնց մօտալուտ պարտութիւնը ճա-
կատագրական կարելի է նկատել, որքան էլ մեծ լինին
նրանց հայրենասիրական անձնագոհութիւնը և պատե-
րազմական արիութիւնը: Միշտ գայլի և գառի առակն
է. անհրաժեշտութիւնների առաջ ոչնչանում են և՛
արդարութիւն և՛ պատիւ և՛ մարդկայնութիւն:

Իայց որպէսզի Անգլիան այսքան սինիկ կերպով
գէնք բարձրացնէ իրանից անհամեմատ տկար մի ժո-
ղովուրդի դէմ և սպառնայ նրա անկախութեան, պէտք
է որ գերագոյն շահեր խաղի մէջ եղած լինին: Ար-
դարեւ, կուրծ, որը նա վճռեց բօէրների դէմ՝ ան-
գլիական կապիտալիստ բուրժուազիայի կոիւն է, և
Զէմբելէյն, որ քաւութեան նոխաղը դարձաւ այդ գոր-
ծի մէջ, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ նոյն այդ բուր-
ժուազիայի գործիքը, որ կատարում է նրա անգառ-
նալի կամքը. իսկ այս կա՛քը ինքը որոշւում է տնտե-
սական ճակատագրական անհրաժեշտութիւններից:

Անգլիան, որպէս գերազանցապէս ինդուստրիական
ժողովուրդ, անհրաժեշտ պէտք ունի շուկաների, վա-
ճաւանոցների, քշելու և սպառելու համար անգլիա-
կան պրօլետարիատի ձեռքով պատրաստուած անբաւ
քանակութեան հառած ապրանքները: Գալթիական
քաղաքականութիւնը, որին հետեւում են աւելի կամ
նուազ չափով նաև բոլոր այն երկրները, որոնց
մէջ հետզհետէ զարգանում է խոշոր ինդուստրիան,
առանձնապէս պատկանում է Անգլիային, որի յաջողու-
թեան համար նա չի խնայի ոչ մի տեսակ ղոհողու-
թիւն, նրանից կախուած լինելով իրա կեանքի և մա-
հօւ խնդիրը ազգերի հետ ունեցած մրցութեան մէջ:
Կապիտալը, որ աներեւակա ելի արագութեամբ կուտա-

կուում է անգլիացի կապիտալիստների ձեռքում, շնորհիվ այն էնտանսիվ շահագործման, որին ենթարկւած է անգլիական պրոլետարիատը, չէ կարող անգործ մնալ. նա շահագործման նոր վայրեր, նոր ասպարէզներ է որոնում: Եւ ինչ վայր աւելի նպաստաւոր ու շահաւոր քան Տրանսվալի բարեբեր հողերը, ոսկու և քարածուխի հարուստ հանքերը, որոնց շահագործումը սակայն չէին կարող ստանձնել իրենք բոէրները, զուրկ լինելով հարկ եղած կապիտալից և արդի քաղաքականութեան արդիւնագործական կատարելագործուած միջոցներից: Անգլիական սրտես կապիտալիստի աչքից չէր կարող, ուրեմն, վրիպիլ բնական հարստութիւններով օժտուած Տրանսվալը որ դէպ իրեն ձգեց բազմաթիւ ակսիոներական-կապիտալիստական ընկերութիւններ, որոնք կարճ ժամանակի մէջ իրենց ձեռքը առին երկրի ինդուստրիան: Ոսկու և ագամանդի հանքերի շահագործումը առաջ բերաւ ահագին գաղթականական հոսանք դէպի Տրանսվալ: Հուտով Ուիտլանդերների (օտրականների) թիւը, որի ամենամեծ մասը անգլիական հպատակ, դերազանցեց անցաւ բոէրների թուից: Փոքրիկ Հանրապետութեան անկախութիւնը փտանգի մէջ էր և բոէրները բնազդաբար սեղմումներ սկսան գործ դնել օտարականների վերայ, որքան կարելի է հեռու պահելու համար նրանց՝ երկրի գործերում միջամտելուց: Օտարականներին ընտրողական իրաւունք վաստակելու համար նշանակուած պայմանաժամը 7-ից 15 ի բարձրագույն և առհասարակ տակսերով և ամեն տեսակ դժուարութիւններով աշխատեցան ազատ պահել երկիրը օտար տարրի արշաւանքի դէմ: Սակայն բոէրների այդ շատ հասկանալի ինքնապաշտպանողական բնազդը չէր կարող փրկել իրեն շահասէր թըշնամու տիրապետական միտումներից. նա ուրիշ բան չարաւ բայց եթէ աւելի արագացրեց ճակատագրական կատաստրֆը: Բոէրը մոռացաւ որկապիտալը թշնամի է որ և է սեղմումի. նա ատելով ատում է ամեն բան որ կարող է խանգարել նրա ազատ շարժումները՝ երկրի բնական և մարդկային ոյժերի շահագործման մէջ Ուստի և անգլիական կապիտալիստ ընկերութիւնների ծրագրի մէջ կանուխ մտաւ Տրանսվալի ամբողջական գրաւման անհրաժեշտութիւնը: Այդ մտքի գործադրութիւնը, որքան էլ դժուարութիւնների բաղկուէր, լինելով անգլիական կապիտալի գոյութեան անհրաժեշտ պայման, շուտով կազմեց անգլիական կոլոնիաների նախարարութեան քաղաքականական գիծը, որին հետևում է մինչ օրս անգլ. կաբինէտը կամակոր յամառութեամբ: 1884 ի անյաջող պատերազմին յաջորդեց արկածախնդիր Զէյմսի նոյնպէս անյաջող և դայմագրեցուցիչ արշաւանքը, որ յիշեցնում է 19-րդ դարու մարդուն Արգոնաւորդ Յասուլի արշաւանքը դէպի Կոլքիս՝ ոսկեգեղմը յափշտակելու համար: Բայց ինչ որ չէր կարող անել իսլաւական լին փորձը, այն կատարում է այժմ՝ արդէն Մայր Հայրենիքը, դնելով նրան այսպէս ասած օրինական ճանապարհի վերայ, որի իմաստն ու էութիւնը, սակայն, մնում են մի և նոյնը:

Բայց որքան էլ իւր կեղծաւորութեամբ խորշելի և զգացման դպչող լինի անգլիական կաբինէտի քաղաքականութիւնը հանդէպ մի բուռն ժողովրդի, որ իւր ազատութեան համար առաջադրում է յուսահատ ճիգեր թափել, այնու ամենայնիւ, պլանը որի ի-

րագործմանը անդառնալի կերպով նուիրուած է նա հանդիսանում է որպէս մին ժամանակակից բուրժուազական քաղաքակրթութեան տմենափառաւորներիցը: Զանց առնելով խօսիլ այն պրօէկտի մասին, որի համեմատ անգլիացի պետական մարդիկ մտածում են Արգոնաւորդիայից գիծ անցկացնել մինչև Հանգայ, անցնելով Միջագետքի, Պարսկաստանի և Աֆղանիստանի վերայով, հակակշռելու համար ռուսական տրանսսիբերական երկաթուղու ազդեցութիւնը ծայրագոյն Արեւելքում, արդէն ծրագրուած է և հաւանականօրէն գործադրութիւն կստանայ Տրանսվալի հարցի փակումից անմիջապէս յետոյ, որ արգելք էր լինում այդ բանին, միացնել Հարաւ. Աֆրիկայի կոլոնիները եգիպտական հողին, երկաթուղու գծով, որ անցնելով Տանգանյայկայի մօտերով, կկտրէ անմատչելի Յամաբը իւր բոլոր երկարութեամբ:

Այսպէս, ժամանակակից բուրժուա պետութիւնները իրենց փոխադարձ մրցակցութեանց շնորհիւ, մղում են և կմղեն հետզհետէ աւելի առաջ մարդկային քաղաքակրթութիւնը, դրոշմելով, սակայն, նրա վերայ բուրժուադիային յատուկ կեղծաւորութեան կնիքը և մշտական վրդովման ենթարկելով ազգերի անդորրութիւնը մինչև կժամանէ սօսիալիստական աշխարհը, որ կբերէ իրեն հետ խաղաղութիւն շահերի և համեմաշխ ներդաշնակութիւն միջազգային յարաբերութիւնների մէջ:

Հ. Խ.

Վուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացւեցին հետևեալ գումարները. —

» Բանուոր » Մասնաճիւղից 730 ռուբլ.

» Կեդրոնական » մասնաճիւղից 200 ռբլ.

» Կորաշէն » մանձ. 300 և » բանուորի » ի միջոցով 120 ռուբլով.

Նաև » Կեդրոնական » Մասնաճիւղից Վուս. նախկին Կեդրոնը ստացած է 1,000 ռբ. Հ.-Մ. ի միջոցով և 504 ռբլ. առանձին:

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1. Ներկայիւս յայտնում ենք, որ այն բոլոր վկայագրերը, որոնք տրւած են նախորդ Կեդրոնի կողմից մինչև այս տարւայ օգոստոս ամսի սկիզբը, անվաւ եր են համարւում և կորցնում իրանց զօրութիւնը:

2. Խնդրում է նրանց, որ ցանկանում են » Հնչակ » ստանալ վերանորոգեն կամ յայտնեն մեղ իրանց հասցէները:

3. Մեր Մասնաճիւղերին և ընթերցող հասարակութեան ուղարկութեան ենք հրաւիրում մեր նոր հասցէն, որ հետևեալն է. —

6 Նոյեմբերի, 1899.

ՀնՁ. ԿՈՒՍ. ԿԵԴՐՈՆ.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցէով. —

M. Lambert. — 85, Peckham Rye
London S.E. [Angleterre].

» ՀնՁԱԿ «-ի ՏՊԱՐԱՆ.

10 ՆՊՈՆ.